ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 370-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի N 649-Ա հրամանը և 2020 թվականի ապրիլի 17-ի N ՍՊ/20.1/10461-2020 հանձնարարականը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2020 թվականի չորրորդ եռամսյակում* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն՝ հավելվածի:

2. Իրավական հսկողության իրականացման գործընթացում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Իրավական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Յուրաքանչյուր համայնքում իրավական հսկողությունն ավարտելուց հետո, մեկամսյա ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2020 թվականի սեպտեմբերի 29
ք. Հրազդան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 370-Ա որոշման

2020 թվականի չորրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

h/h	Համայնքի անվանումը	ժամանակահատվածը	Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
			Ձբաղեցրած պաշտոնը (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Ազգանունը, անունը
1	2	3	5	6
1	Արզնի	հոկտեմբեր 2017-հոկտեմբեր 2020	ղեկավար՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ անդամներ՝ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ - ՀՀ Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ	*Ալեքսանյան Հարություն* *Թումոյան Ռոբերտ* *Բաղդասարյան Սեդա* *Վարդանյան Արմեն* *Ավետիսյան Գուրգեն* *Թումոյան Կամո* *Հակոբյան Արթուր* *Հակոբյան Հայկ* *Արտաշյան Շավարշ*
2	Գողթ	նոյեմբեր 2017-հոկտեմբեր 2020		
3	Քանաքեռավան	դեկտեմբեր 2017-նոյեմբեր 2020		
4	Չարենցավան	օգոստոս 2017-նոյեմբեր-դեկտեմբեր 2020		